Հավելված N 1
ՀՀ կառավարության 2009 թվականի
նոյեմբերի 26-ի N 1367- Ն որոշման

Ն Կ Ա Ր Ա Գ Ի Ր

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱԾ
ՓԱԽՍՏԱԿԱՆԻ ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԻ
ՆՄՈՒՇԻ

1. Ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականի անձը հաստատող փաստաթուղթը (այսուհետ՝ ժամանակավոր ապաստանի վկայական) 88 x 125 մմ չափսի և 12 էջից բաղկացած փաստաթուղթ է:

2. Ժամանակավոր ապաստանի վկայականի շապիկը մուգ կանաչ գույնի է: Շապիկի երեսի վերևի մասում հայերեն գլխատառերով տպագրվում են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» բառերը: Կենտրոնում պատկերվում է Հայաստանի Հանրապետության զինանշանը: Զինանշանից ներքև տպագրվում են «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՊԱՍՏԱՆԻ ՎԿԱՅԱԿԱՆ» բառերը:

3. Ժամանակավոր ապաստանի վկայականի շապիկի հակառակ երեսի կենտրոնում գունավոր պատկերվում է Հայաստանի Հանրապետության զինանշանը, զինանշանի վերևի մասում տպագրվում են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ», ներքևի մասում՝ «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՊԱՍՏԱՆԻ ՎԿԱՅԱԿԱՆ» բառերը, իսկ շապիկի ներքևում՝ «ՎԿԱՅԱԿԱՆԸ ՎԱՎԵՐԱԿԱՆ Է ՄԻԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ» նախադասությունը:

4. Ժամանակավոր ապաստանի վկայականի 1-ին էջի վերևի մասում տպագրվում են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» բառերը, էջի ձախ մասից մինչև լուսանկարի համար նախատեսված տեղը՝ «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՊԱՍՏԱՆԻ ՎԿԱՅԱԿԱՆ» բառերը, իսկ լուսանկարի աջ կողմից հաջորդականությամբ՝ «ԱԶԳԱՆՈՒՆԸ, ԱՆՈՒՆԸ, ՀԱՅՐԱՆՈՒՆԸ»,

«ԾՆՆԴԱՎԱՅՐԸ», «ԾՆՎԵԼ Է», «ՍԵՌԸ», «ԱԶԳՈՒԹՅՈՒՆԸ», «ԵՐԿԻՐԸ», «ՏՐՎԵԼ Է», «ՎԱՎԵՐԱԿԱՆ Է ՄԻՆՉԵՎ», «ՈՒՄ ԿՈՂՄԻՑ», «ՎԿԱՅԱԿԱՆԻ ՏԻՐՈՋ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ» բառերը։

5. Ժամանակավոր ապաստանի վկայականի 1-ին էջի ձախ մասում «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՊԱՍՏԱՆԻ ՎԿԱՅԱԿԱՆ» բառերից ներքև տեղ է հատկացվում վկայականի տիրոջ՝ 35 x 45 մմ չափսի լուսանկարի համար։

6. Ժամանակավոր ապաստանի վկայականի 2-րդ և 3-րդ էջերի վերևի մասում տպագրվում են «ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ» բառերը, 4-րդ և 5-րդ էջերում՝ «ԵՐԵԽԱՆԵՐԸ» բառը, որից ներքև՝ «ԱԶԳԱՆՈՒՆԸ, ԱՆՈՒՆԸ, ՀԱՅՐԱՆՈՒՆԸ, ԾՆՆԴՅԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ, ԱՄԻՍԸ, ՏԱՐԵԹԻՎԸ», 6-րդ և 7-րդ էջերում՝ «ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՅՐԸ», 8, 9, 10, 11 և 12-րդ էջերում՝ «ՀԱՏՈՒԿ ՆՇՈՒՄՆԵՐ» բառերը։

7. Ժամանակավոր ապաստանի վկայականի 3, 5, 7, 9 և 11-րդ էջերի ներքևի մասում տպագրվում են վկայականի սերիան և համարը։

8. Ժամանակավոր ապաստանի վկայականներն ունեն մեկ սերիա։ Սերիան նշագրվում է հայերեն «ԺԱ» գլխատառերով։ Վկայականների համարակալումն սկսվում է 000001 թվանշանով։

9. Ժամանակավոր ապաստանի վկայականի շապիկի վերջին էջի ներսի վերևի մասում տպագրվում են «ՎԿԱՅԱԿԱՆԸ ՏՐՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՊԱՍՏԱՆ ՍՏԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ», «ՎԿԱՅԱԿԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ Է», իսկ ներքևի մասում՝ «ՎԿԱՅԱԿԱՆԸ ԲԱՂԿԱՑԱԾ Է 12 ԷՋԻՑ» բառերը։

10. Լուսանկարը փակցվելուց հետո վկայականը կնքվում է միգրացիայի հարցերով լիազոր պետական մարմնի կնիքով։

11. Վկայականի բոլոր էջերը համարակալվում են։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2009 թվականի
նոյեմբերի 26-ի N 1367- Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱԾ ՓԱԽՍՏԱԿԱՆԻ ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ ԿՈՆՎԵՆՑԻՈՆ ՃԱՄՓՈՐԴԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՎ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ

1. Սույն կարգով սահմանվում են ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականի անձը հաստատող փաստաթուղթը կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթով փոխանակելու հետ կապված հարաբերությունները։

2. Ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականի անձը հաստատող փաստաթուղթը կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթով փոխանակվում է միգրացիայի հարցերով լիազոր պետական մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին) կողմից։

3. Ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականն իր անձը հաստատող փաստաթուղթը կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթով փոխանակելու համար՝ ժամանակավոր պաշտպանություն ստանալու օրվանից մեկ տարի հետո լիազոր մարմին է ներկայացնում՝

1) դիմում.

2) փոխանակման ենթակա փաստաթուղթը.

3) 35 x 54 մմ չափսի 2 լուսանկար (գունավոր)։

4. Ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականի անձը հաստատող փաստաթուղթը փոխանակվում է կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթով, եթե փախստականին տրամադրված ժամանակավոր պաշտպանությունը Հայաստանի Հանրապետու-թյան օրենսդրությամբ սահմանված կարգով չի դադարեցվել։

5. Ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականի անձը հաստատող փաստաթուղթը փոխանակվում է կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթով՝ դիմումն ստանալուց հետո մեկշաբաթյա ժամկետում։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ